ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Գ. Նալբանդյան
Հեռ. 093-008908
094-189908
1կցորդում 1 չենք
«13» «10» 2011թ. թիվ 231

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ

ՄԱՐԶՊԵՏ՝ ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Նալբանդյան համայնքի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 9 հերթական նիստի որոշումները:

Առդիր 13 էջ:

Համայնքի ղեկավար Գ. Մկրտչյան

9727-11
13. 10 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Նալբանդյան 10/10/2011թ.

ՈՐՈՇՈՒՄ N 1

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ „ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍՈՎ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է `

1. Հաստատել ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 10 -ի թիվ 9 հերթական նիստի օրակարգը ` համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ավագանու անդամներ՝

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Գ. Մկրտչյան | -------- | -------- | --------- |
| 2. Ս. Մարտիրոսյան | -------- | -------- | --------- |
| 3. Յու. Վարդանյան | -------- | -------- | --------- |
| 4. Ֆ. Մարտիրոսյան | -------- | -------- | --------- |
| 5. Մ. Պետրոսյան | -------- | -------- | --------- |
| 6. Ա. Սամսոնյան | -------- | -------- | --------- |

Համայնքի ղեկավար՝ Գ.Մկրտչյան

2011 թվականի հոկտեմբերի 10
գ.Նալբանդյան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Նալբանդյան գյուղական համայնքի
ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 10-ի
թիվ 9 հերթական նիստի
N 1 որոշման

1. Օրակարգը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղական համայնքի վարչական տարածքում 2012 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
3. Համայնքի 2011 թվականի 3-րդ եռամսյակի մուտքերի մասին:
4. Ավտոմեքենաների գույքահարկը զիջելու մասին:
5. Դրամական օգնություն հատկացնելու մասին:
6. Համայնքի 2011 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Նալբանդյան 10.10.2011թ.

# ՈՐՈՇՈՒՄ N 2 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին " Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով,,, Տեղական տուրքերի և վճարների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ և 10-րդ հոդվածներով,և ,, Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղական համայնքի վարչական տարածքում 2012 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Գ. Մկրտչյան | -------- | -------- | --------- |
| 2. Ս. Մարտիրոսյան | -------- | -------- | --------- |
| 3. Յու. Վարդանյան | -------- | -------- | --------- |
| 4. Ֆ. Մարտիրոսյան | -------- | -------- | --------- |
| 5. Մ. Պետրոսյան | -------- | -------- | --------- |
| 6. Ա. Սամսոնյան | -------- | -------- | --------- |

Համայնքի ղեկավար՝ Գ.Մկրտչյան

2011 թվականի Hոկտեմբերի 10
գ.Նալբանդյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Նալբանդյան գյուղական համայնքի ավագանու
2011 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 9
հերթական նիստի N 2-Ն որոշման

ՑԱՆԿ
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական)շինությունների (տեղադրման) թույլատվության համար տեղական տուրքը սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում `այգեգործական /ամառանոցային/ տների , ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 5000 / հինգ հազար/դրամ.

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10 000 / տասը հազար/ դրամ,

բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10 000 / տասը հազար/ դրամ,

բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15 000 / տասնհինգ հազար/ դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 / /մեկ հազար հինգ հարյուր /դրամ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման,վերականգնման,արդիականացման,աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված`շինարարության թույլտվության չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների ,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափսերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառական նշանակության փոփոխություն՝1500/մեկ հազար հինգ հարյուր/դրամ ,ապա,

բ/ բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափսերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն , ապա բացի ,սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի , կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական փոփոխության մասով.

գ/նախատեսվում է միայն կցակառուցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ստորգետնյա / շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն ,ապա,սույն օրենքի իմաստով,այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:
4.Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի,իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի իրացման
1/ հիմնական շինությունների ներսում վաճառքի /իրացման/ կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 6000/վեց հազար/դրամ.
2/ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի /իրացման/ կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 7000 /յոթ հազար/դրամ.
5. Համայնքի տարածքում
ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 / երեք հարյուր հիսուն /դրամ.
բ/հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տուրքը սահմանել յուրաքանչյու տարվա համար՝ 150.000/ հարյուր հիսուն հազար դրամ/:
6.Համայնքի տարածքում ՝ առևտրի հանրային սննդի, զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները / սաունաները/ , խաղատները ժամերը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա/ առևտրի օբյեկտների համար 25.000 /քսանհինգ հազար/ դրամ.
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 /հիսուն հազար/ դրամ
գ/ բաղնիքների / սաունաների/ համար՝ 200.000 /երկու հարյուր հազար/ դրամ.
դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500.000 /հինգ հարյուր հազար/դրամ.
ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 /երկու հարյուր հիսուն հազար / դրամ.
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 / մեկ հարյուր հազար / դրամ.
7. Յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.
բ/ թունդ ալկոհոլային /սպիրտ պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկեւ հազար հինգ հարյուր/ դրամ.
գ/ այլ արտաքին գովազդի համար ՝ 500 /հինգ հարյուր/դրամ.
դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հարյուր/դրամ.
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները և կրկնօրինակները տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5000 /հինգ հազար/դրամ.
9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 /հինգ հազար/ դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ՝

1.Համայնքի տարածքում շիրարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 /հինգ հազար/դրամ.
2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել ՝ 5000 /հինգ հազար/ դրամ:
3.Համայնքի տարածքում մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել ՝ 10 000 /տաս հազար/ դրամ:

4. ,,Մանկապարտեզ" ՀՈԱԿ համար ամսական ծնողական վճար սահմանել 3000/երեք հազար/ դրամ:

5.,,Երաժշտական դպրոց" ՀՈԱԿ ամսական վճար սահմանել 2500/ երկու հազար հինգ հարյուր/դրամ:

6.Խմելաջրի մատակարարման համար մեկ ընտանիքի համար դրույքաչափ սահմանել 1000/մեկ հազար/դրամ, սահմանել արտոնություն՝ համայնքում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքի համար 50 %-ի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Նալբանդյան 10.10.2011թ.

# ՈՐՈՇՈՒՄ N 3

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ 3-րդ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի առաջին մասով.

Համայնքի ավագանու որոշում է՝

1.Հաստատել համայնքի բյուջեի 2011 թվականի3-ին եռամսյակի բյուջեի ընթացքի մասին հաշվետվությունը.
2.Հանձնարարել գյուղապետին՝
ա)Ակտիվացնել աշխատակազմի աշխատանքների գործունեությունը՝բյուջեի մուտքերի ավելացման ուղղությամբ.
բ)Առավել մեծ պարտքատերերից օրենքով սահմանված կարգով գանձել գումարներ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Գ. Մկրտչյան | [signature] | -------- | --------- |
| 2. Ս. Մարտիրոսյան | [signature] | -------- | --------- |
| 3. Յու. Վարդանյան | [signature] | -------- | --------- |
| 4. Ֆ. Մարտիրոսյան | [signature] | -------- | --------- |
| 5. Մ. Պետրոսյան | [signature] | -------- | --------- |
| 6. Ա. Սամսոնյան | [signature] | -------- | --------- |

Համայնքի ղեկավար՝ [signature] Գ.Մկրտչյան

2011 թվականի հոկտեմբերի 10
գ.Նալբանդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Նալբանդյան 10.10.2011թ

ՈՐՈՇՈՒՄ N 4

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Գույքահարկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանու որոշում է՝

1. Զիջել համայնքի սոցիալապես անապահով բնակիչների ավտոմեքենաների գույքահարկը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Գ. Մկրտչյան | ------- | -------- | --------- |
| 2. Ս. Մարտիրոսյան | ------- | -------- | --------- |
| 3. Յու. Վարդանյան | ------- | -------- | --------- |
| 4. Ֆ. Մարտիրոսյան | ------- | -------- | --------- |
| 5. Ս. Պետրոսյան | ------- | -------- | --------- |
| 6. Ա. Սամսոնյան | ------- | -------- | --------- |

Համայնքի ղեկավար՝ Գ.Մկրտչյան

2011 թվականի հոկտեմբերի 10
գ.Նալբանդյան

Հավելված`
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Նալբանդյան գյուղական համայնքի
ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 10-ի
թիվ 9 հերթական նիստի N4 որոշման

ՑԱՆԿ

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԻՋԵԼ

| | | |
|---|---|---|
| 1 | Զավոյան Գուլիխան - Վազ 21013, 28LO223 | 35613 դրամ |
| 2. | Ասատրյան Արմեն -Վազ 21074, 27OU376, | 8000 դրամ |
| 3. | Շավերշյան Սիաբանդ - Վազ 2106 ,28OU668, | 7700 դրամ |
| 4. | Պողոսյան Արմեն - Վազ 2106, 28UO161, | 8000 դրամ |
| 5. | Գինոսյան Մաքևոս - Օպել Օմեգա 2,28OS987 | 63971 դրամ |
| 6. | Հերոյան Ռոբերտ - Վոլցվագեն Պասատ , 19UO278, | 10015 դրամ |
| 7. | Հարությունյան Գալուստ - Վազ21061,09SU250, | 7700 դրամ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Նալբանդյան 10.10.2011

# ՈՐՈՇՈՒՄ N 5

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունում պահից:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Գ. Մկրտչյան | -------- | -------- | --------- |
| 2. Ս. Մարտիրոսյան | -------- | -------- | --------- |
| 3. Յու. Վարդանյան | -------- | -------- | --------- |
| 4. Ժ. Մարտիրոսյան | -------- | -------- | --------- |
| 5. Ս. Պետրոսյան | -------- | -------- | --------- |
| 6. Ա. Սամսոնյան | -------- | -------- | --------- |

Համայնքի ղեկավար՝ Գ.Մկրտչյան

2011 թվականի հոկտեմբերի 10
գ.Նալբանդյան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Նալբանդյան գյուղական համայնքի
ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 10-ի
թիվ 9 հերթական նիստի N5 որոշման

ՑԱՆԿ

Դրամական օգնություն հատկացված,սոցիալապես անապահով ընտանիքներին

1. Հովհաննիսյան Մկրտիչ - 30.000 /երեսուն հազար/ դրամ
2. Դարբինյան Եվգենյա - 50.000/ հիսուն հազար/ դրամ
3. Հերոյան Ռոբերտ -50000/ հիսուն հազար/ դրամ
4. Վարդանյան Վարդան - 50.000/ հիսուն հազար/ դրամ
5. Առաքելյան Ռոբերտ - 50.000/ հիսուն հազար/ դրամ
6. Մարգարյան Անդրանիկ - 60.000/ վաթսուն հազար/ դրամ
7. Մարգարյան Լյովա - 60.000/ վաթսուն հազար/ դրամ
8. Գևորգյան Գայանե -50.000/հիսուն հազար/ դրամ
9. Մարգարյան Գևորգ - 50.000/հիսուն հազար/ դրամ
10. Հովհաննիսյան Նաիրա - 50.000/ հիսուն հազար/ դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Նալբանդյան 10/10/2011

# ՈՐՈՇՈՒՄ N 6-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին " Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ,, Իրավական ակտերի մասին " Հայաստանի հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 11 արտահերթ նիստի 2-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն ՝ համաձայն հավելվածի :
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

| | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Գ. Մկրտչյան | | -------- | --------- |
| 2. Ս. Մարտիրոսյան | -------- | -------- | --------- |
| 3. Յու. Վարդանյան | | -------- | --------- |
| 4. Ֆ. Մարտիրոսյան | | -------- | --------- |
| 5. Մ. Պետրոսյան | | -------- | --------- |
| 6. Ա. Սամսոնյան | | -------- | --------- |

Համայնքի ղեկավար՝ Գ.Մկրտչյան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Նալբանդյան գյուղական համայնքի
ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 10-ի
թիվ 9 հերթական նիստի
N 6-Ն որոշման

ՑՈՒՑԱԿ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղական համայնքի 2011 թվականի բյուջեի փոփոխության:

1. Վարչական ապարատի 01 1 1 բաժին, խումբ,դասի վարչական մասի 4251 հոդվածից 54,5 հազար դրամ տեղափոխել նույն բաժին,խումբ,դասի 4233 հոդված և 545,5 հազար դրամ նույն բաժին, խումբ,դասի 4131 հոդված:
2. Վարչական ապարատի 01 1 1 բաժին, խումբ,դասի վարչական մասի 4215 հոդվածից 100,0 հազար դրամ տեղափոխել նույն բաժին, խումբ,դասի 4234 հոդված:
3. Վարչական ապարատի 01 1 1 բաժին,խումբ,դասի ֆոնդային մասի 5113 հոդվածից 200,0 հազար դրամ և 5122 հոդվածից 300,0 հազար դրամ տեղափոխել 08 2 3 բաժին, խումբ,դասի 5122 հոդված: